

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Սպառողական գների ինդեքս (ՍԳԻ)
0.2	Ոլորտը	Սպառողական գներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բաժնի պետ Մարիամ Երիցյան Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին Կառավարական շենք 3, Հանրապետության պողոտա Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն Հեռախոս՝ +374 11 564 566 Էլ. Փոստ: mariam_yeritsyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Սպառողական գների ինդեքսն որոշում է կայուն զամբյուղի ապրանքների գների և ծառայությունների սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը ժամանակի ընթացքում և որոշում այդ արժեքի հարաբերակցության մեծությունը հաշվետու ժամանակահատվածում բազիսային ժամանակահատվածի համեմատ:</p> <p>ՍԳԻ-ն բնութագրում է բնակչության կողմից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գների և սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը տարեկան, եռամսյակային, ամսական պարբերականությամբ:</p> <p>Սպառողական գների ինդեքսը հաշվարկվել է 1993 թվականից ի վեր ամսական կտրվածքով: Սպառողական գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է Միջազգային Արժույթային Հիմնադրամի հետ համատեղ:</p> <p>Մինչև 2003 թվականը կշիռները արդիականացվում էին ամեն տարի: Բազիսային ժամանակաշրջանն ինդեքսների և կշիռների համար համարվում էր նախորդ տարվա դեկտեմբերը: 2003 թվականից մինչև 2014 թվականը ներառյալ կշիռները արդիականացվել են 3- 5 տարին մեկ: Սկսած 2015</p>

թվականից ՀՀ Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար որպես կշիռների և ինդեքսների բազիսային ժամանակահատված ընդունվել է նախորդ տարվա դեկտեմբերը:

Հիմք ընդունելով «Սպառողական գների ինդեքսի ձեռնարկ. տեսություն և կիրառում, 2004» (ԱՄԿ/ԱՄՀ/ՏՀԶԿ/ՄԱԿ ԵՏԽ/Եվրոստատ/ՀԲ) ձեռնարկի պահանջները, գների վիճակագրության ոլորտում աշխարհի առաջավոր երկրների գործող ՄԳԻ-ի մեթոդաբանություններում կատարված առաջընթացները, նոր հինգ նիշ «Անհատական սպառում ըստ նպատակների դասակարգիչ» (ԱՍԸՆԴ), ինչպես նաև ԵՍ «Թվինինգ» ծրագրի շրջանակներում գների վիճակագրության գծով օգնություն ցուցաբերած միջազգային փորձագետների առաջարկները և խորհուրդները, 2017 թվականի փետրվարից (2017թ. հունվարի ցուցանիշների վերանայմամբ) իրականացել է ՀՀ սպառողական գների ինդեքսի դիտարկման կարգի և հաշվարկման գործող մեթոդաբանության վերանայում:

ՄԳԻ-ի կշիռները, որոնք օգտագործվում են ինդեքսների ագրեգացման համար, հաշվարկվում են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա դրամային ծախսումների մասին տվյալների հիման վրա:

ՄԳԻ-ի կշիռների վերանայման ժամանակացույցը պայմանավորված է տնային տնտեսությունների իրականացվող հետազոտության պարբերականությամբ (յուրաքանչյուր տարի), դրա արդյուքում ստացված ծախսումների մասին տվյալների առկայությամբ, ինչպես նաև կառուցվածքային զգալի տեղաշարժերով:

ՄԳԻ-ի մեթոդաբանական հիմքերն են. «Սպառողական գների ինդեքսի մասին բանաձև», ընդունված 2003թ. նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 3-ը ժնկում կայացած 17-րդ Աշխատանքի վիճակագիրների Միջազգային կոնֆերանսում,

		<p>Սպառողական Գների Ինդեքսի Ձեռնարկ, Տեսություն և պրակտիկա, 2004 (ԱՄԿ (ILO), ԱՄՀ (IMF), ՏՀԶԿ (OECD), Եվրոստատ, Միացյալ Ազգերի կազմակերպություն, Համաշխարհային Բանկ), ՀՀ Սպառողական գների ինդեքսի մեթոդաբանությունը՝ «Մեթոդաբանական ցուցումներ սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման և սպառողական գների ինդեքսի հաշվարկման», տես հետևյալ հղումը՝ https://www.armstat.am/am/?nid=39:</p>
0.5	<p>Օգտագործողները և կիրառումը</p>	<p>ՄԳԻ-ն հանդիսանում է մակրոտնտեսական կարևորագույն ցուցանիշներից մեկը, որը պետական մարմինների կողմից օգտագործվում է դրամավարկային և ֆինանսական քաղաքականության մշակման և իրագործման, տնտեսության մեջ գնաճային գործոնների վերլուծության, կանխատեսման և գսպման, առանձին իրավաբանական վիճաբանություններ լուծելու համար և այլն: Հայաստանի Հանրապետությունում ՄԳԻ-ն հանդիսանում է գնաճը բնութագրող միակ ցուցանիշը: ՄԳԻ-ն օգտագործվում է ընթացիկ գներով մակրոտնտեսական ցուցանիշները համադրելի գներով վերահաշվարկման համար, այսինքն հանդիսանում է որպես դեֆլյատոր ազգային հաշիվների ցուցանիշները հաստատուն գներով վերահաշվարկելու համար:</p>
0.6	<p>Տեղեկությունների աղբյուրները</p>	<p>Հայաստանի ՄԳԻ-ի կշիռների հաշվարկման համար ընդգրկված են մշտական բնակություն ունեցող տնային տնտեսությունների կողմից կատարած դրամային ծախսումների մասին տվյալները: Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար Երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում սահմանված մեթոդաբանությամբ կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում: Յուրաքանչյուր ապրանք-ծառայության գների (սակագների) 450 անվանում, շուրջ 8000 ապրանք-ծառայության ներկայացուցիչ) արձանագրման համար յուրաքանչյուր բնակավայրում դիտարկվում են 6-12 նախապես ընտրված առևտրային և ծառայություն մատուցող</p>

		<p>կազմակերպություններ: ՀՀ սպառողական գների դիտարկումների համար ընտրված առևտրի կետերի (ինչպիսիք են սուպերմարկետները, մթերային խանութները, ոչ մթերային խանութները, խառը խանութները, գյուղատնտեսական մթերքի շուկաները, ծառայություններ մատուցող կազմակերպությունները) ընդհանուր քանակը շուրջ 2700 է: Տվյալները հավաքվում են ամսական 3 անգամ և ուղարկվում են Արմստատի մարզային վարչությունների կողմից Արմստատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին մինչև հաշվետու ամսվա 25-ը, որտեղ ամենամսյա կտրվածքով իրականացվում է այդ տվյալների ստուգումը, ամփոփումը և ՄԳԻ-ի հաշվարկը: Գին դիտարկող մասնագետներն այցելելով բազային մանրածախ առևտրի և ծառայություն մատուցող կետերը գնային տեղեկատվությունը հիմնականում գրանցում են թղթային հաշվետվական ձևերում, ինչպես նաև ձեռքի համակարգիչներով: Որոշ ծառայությունների սակագները, որոնք մինևույնն են ամբողջ հանրապետության համար, ինչպիսիք են օրինակ հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի, գազի և այլ ծառայությունների սակագները, հավաքվում են Արմստատի գլխավոր գրասենյակի համապատասխան ստորաբաժնման կողմից: Յուրաքանչյուր ամիս ՄԳԻ-ի հաշվարկների համար գրանցվում են շուրջ 250000 գնային ցուցանիշներ: Տարրական ագրեգատների ինդեքսների կշիռները հաշվարկվում են տնային տնտեսությունների ինտեգրացված հետազոտության ծախսումների մասին տվյալների հիման վրա: Որոշ ապրանքների և խմբերի համար (ինչպիսիք են ակոհոլային խմիչքները և ծխախոտը, բջջային կապի, տրանսպորտի ծառայությունները և այլն) տնային տնտեսությունների հետազոտության տվյալները ճշգրտվում են նաև վիճակագրության համապատասխան ճյուղային բաժինների ցուցանիշներով:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի, «Հնգամյա վիճակագրական ծրագրի», Տարեկան վիճակագրական

		<p>ծրագրի, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. դեկտեմբերի 12-ի «Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման կարգը հաստատելու մասին» թիվ N39-Ս, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. դեկտեմբերի 12-ի «Մեթոդաբանական ցուցումներ սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման և սպառողական գների ինդեքսի հաշվարկման մասին» հաստատելու թիվ N40-Ս որոշումների հիման վրա:</p>
0.8	<p>Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը</p>	<p>Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը չի հաշվարկվում, դրա բացակայության պատճառով:</p>
<p>1 Բովանդակություն</p>		
1.1	<p>Բովանդակության նկարագիրը</p>	<p>Սպառողական գների ինդեքսը ցույց է տալիս Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում տնային տնտեսությունների կողմից գնված ապրանքների գների և ծառայությունների սակագների ամսական փոփոխությունները: ՀՀ Սպառողական գների ինդեքսը հաշվարկվում է հաստատուն կշռվածությամբ Լասպեյրեսի մոդիֆիկացված բանաձևով: Արձանագրված գները սպառողների կողմից վճարված գործարքների փաստացի արժեքներն են, որոնց մեջ ներառված են բոլոր տեսակի հարկերը, ինչպես օրինակ Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), ակցիզային հարկը և այլն: Ներկայումս հաշվարկվող ՄԳԻ-ն ընդհանուր առմամբ արտացոլում է նրանում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գների փոփոխությունների միջին կշռված մակարդակը: 11 խոշոր բնակավայրերի համար, որոնք ներկայացնում են հանրապետության 10 մարզերը և մայրաքաղաք Երևանը հաշվարկվում են առանձին</p>

		<p>ՄԳԻ-ներ: ՀՀ ՄԳԻ-ն հաշվարկվում են վերը նշված 11 բնակավայրերի համապատասխան ցուցանիշներից ագրեգացման եղանակով՝ որպես կշիռներ օգտագործելով բնակչության թվաքանակի, ապրանքաշրջանառության և ծառայության ծավալների մասին տվյալները:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>ՄԳԻ-ի հաշվարկներում ընդգրկված են բոլոր տեսակի տնային տնտեսությունները, անկախ իրենց եկամուտի չափից: Ապրանքների և ծառայությունների տեսակների ընտրման գործընթացն իրականացվում է հիմնվելով տնային տնտեսությունների հետազոտության դրամային ծախսումների մասին ստացված տվյալների վրա՝ ընտրելով դրանցից առավել մեծ սպառում ունեցող ապրանքներ և ծառայություններ: Ապրանքների և ծառայությունների ցանկի արդիականացման նկատառումով պարբերաբար իրականացվում են դիտարկվող կետերի ուսումնասիրություններ, տրվում են փորձագիտական գնահատումներ:</p>
	Աշխարհագրական ընդգրկունություն	<p>Դիտարկումներն ընդգրկում են Հայաստանի Հանրապետության 10 խոշոր բնակավայրերը և մայրաքաղաք Երևանը:</p>
	Ապրանքի ընդգրկունություն	<p>Դիտարկման բազային կետերը (անկախ իրենց գործունեության տեսակից) ընտրվում են ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների հիման վրա, որոնք տրամադրվում են վիճակագրական ճյուղային բաժինների կողմից, ինչպես նաև կիրառելով այլ մեթոդներ: Ներառվում են ինչպես տեղական ծագման, այնպես էլ ներմուծված արտադրատեսակները: Ապրանքների և ծառայությունների փաթեթն (ցանկը) իրենց սահմանումներով պատրաստվում է Արմաստատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից, որն էլ հիմք է հանդիսանում բոլոր մարզերում գնադիտարկումներ իրականացնելու համար: Յուրաքանչյուր ապրանքի համար պատրաստվում է մանրամասն նկարագրություն, որը ներառում է արտադրող երկրի, որակի ցուցանիշների, չափման միավորի և այլնի մասին տեղեկատվություն: Մի</p>

		<p>շարք ապրանքների և ծառայությունների համար գնադիտարկողներին տրամադրված բնութագրերի հետ մեկ տեղ տրվում են հրահանգներ տվյալ մարզի համար բնորոշ և առանձնապես մեծ սպառում ունեցող ապրանքի տեսակը դիտարկման համար ընտրելու համար: Գնադիտարկողը կազմում է իր կողմից ընտրված ապրանքի տեսակի համար լրացուցիչ բնութագիր, ինչպես օրինակ՝ գույնը, կազմը, բրենդը, մոդելը և այլն:</p>
Փոփոխականներ		<p>Գներ. Ապրանքների և ծառայությունների սպառողական (մանրածախ) գները, որոնցով հաշվարկվում են ինդեքսները: Ինդեքսներ. Ջուտ գնային փոփոխությունն արտացոլող ցուցանիշներ:</p> <p>Տարրական ինդեքսների կշիռներ. Կշիռներ, որոնք օգտագործվում են որպես տարրական ագրեգատների ինդեքսների կշիռներ՝ ենթախմբերի ինդեքսներ կազմելու, ինչպես նաև դրանց ագրեգացման մեթոդով ընդհանուր սպառողական գների ինդեքս ստանալու համար:</p>
Վիճակագրական չափորոշիչներ		<p>Ինդեքսների ամենացածր մակարդակը հաշվարկվում է որպես արձանագրված գների ինդեքսային գործակիցների (գների հարաբերականների) միջին երկրաչափական մեծությունների հարաբերակցություն:</p> <p>Տարրական ինդեքսները կշռվելով ագրեգացվում են (որպես միջին թվաբանական կշռված ինդեքսներ) ըստ ԱՍԸՆ դասակարգչի համապատասխան խմբավորումների 5-ից 2 նիշ մակարդակների ենթաինդեքսների և ընդամենը ՍԳԻ-ի: Բոլոր խմբավորումներն իրականացվում են օգտագործելով տարրական ինդեքսները:</p> <p>ՀՀ ՍԳԻ-ն հաշվարկվում է հաստատուն կշիռներով Լասպեյրեսի մոդիֆիկացված բանաձևով: ՍԳԻ-ն հաշվարկվում է ինչպես ԱՍԸՆ դասակարգչի համապատասխան խմբավորումների, այնպես էլ 3 հիմնական խմբերի՝</p> <ul style="list-style-type: none"> • Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) • Ոչ պարենային ապրանքներ

		<ul style="list-style-type: none"> • Ծառայություններ
	Խմբավորումները	ՄԳԻ-ն դասակարգված է համաձայն ԱՍԸՆ դասակարգչի հայաստանյան տարբերակի, որը 5 նիշ մակարդակով համապատասխանում է Եվրոպական ԱՍԸՆ դասակարգչի խմբավորումներին, ԱՀՀ-ի 1993թ.-ի ուղեցույցին, Աշխատանքի միջազգային կազմակերպության բանաձևի և ՄԳԻ-ի ձեռնարկի պահանջներին:
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Գնադիտարկման բազային օբյեկտները խմբավորված են 3 պայմանական խմբերի և յուրաքանչյուր խումբ բազային օբյեկտներում գնադիտարկումներն իրականացվում են տվյալ ամսվա ընթացքում մեկ անգամ (յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին կամ 20-ին և դրանց մոտակա օրերին) բացառությամբ թարմ միրգ, բանջարեղեն, վառելիք (բենզին, դիզելային վառելիք) ապրանքատեսակների, որոնց գնադիտարկումը բոլոր բազային օբյեկտներում յուրաքանչյուր ամսում իրականացվում է 3 անգամ (1-ին, 10-ին և 20-ին և դրանց մոտակա օրերին):
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տվյալները հրապարակվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը:
2.3	Ճշտապահություն	Վիճակագրական տվյալները սովորաբար հրապարակվում են առանց ուշացումների, նախապես սահմանված է ժամանակացույցին համապատասխան:
2.4	Հաճախականությունը	Սպառողական գների ինդեքսը հրապարակվում է ամսական պարբերականությամբ:
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ՄԳԻ-ի հուսալիությունը գնահատվում է բարձր:
3.2	Անճշտության աղբյուրները	Սպառողական գների ինդեքսի ստացման հնարավոր վիճակագրական շեղումների հետ կապված կան մի շարք գործոններ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ. Բացակայող գների գահատում. Ապրանքի կամ ծառայության գների ժամանակավոր բացակայության դեպքում (մինչև 2-3 ամիս) կիրառվում է տվյալ ապրանքի (ծառայության)

համապատասխան ենթախմբի գնային փոփոխությունը:
Ապրանքների փոխարինում. Տարրական ապրանքի մակարդակում, որն ունի համապատասխան կշիռ ՄԳԻ-ի զամբյուղում և որի կշիռը և գնային փոփոխությունները օգտագործվում են ՄԳԻ-ի ագրեգացման ժամանակ, ապրանքի փոխարինում չի իրականացվում մինչև կշիռների հերթական արդիականացումը՝ բազիսային ժամանակաշրջանը տարին փոխելու ժամանակ: Եթե տվյալ ապրանքի տեսակը (ապրանքների կայացուցիչը), որի գինը ագրեգացվում է տարրական ապրանքի գնի մեջ տվյալ ապրանքի բոլոր ապրանքների կայացուցիչների գների հետ, անհայտանում է սպառողական շուկայից 3 ամսից ավել, ապա այն փոխարինվում է մեկ այլ համանման տեխնիկական բնութագրերով ապրանք-ներկայացուցիչով:

Առևտրի կետերի փոխարինում. ՄԳԻ-ն հաշվարկվում է ամսական կտրվածքով՝ հիմնվելով միևնույն առևտրային կետերից ստացվող գնային տեղեկատվության վրա: Այն դեպքում, երբ դիտարկվող առևտրի կետը դադարեցնում է իր գործունեությունը, գնադիտարկողը իր հետագա գնադիտարկումներն իրականացնելու համար, համաձայնելով վիճակագրության կենտրոնական գրասենյակի հետ, ընտրում է մեկ այլ առևտրի կետ, որն ունի նմանատիպ առևտրի պայմաններ և գների մակարդակ, ինչպիսիք առկա էին փակված առևտրի կետում:

Որակի տարբերությունների ճշգրտումներ. Դիտարկվող ապրանքի կամ ծառայության որակական փոփոխությունների մասին տեղեկատվությունն առաջնահերթ ստացվում է գնադիտարկման ընթացքում գին դիտարկող մասնագետի կողմից: Առևտրի կետի աշխատակիցների և համապատասխան մասնագետների օգնությամբ գնադիտարկող մասնագետը հաշվարկում է որակական փոփոխության արժեքը: Որակի ճշգրտման այս մեթոդը կոչվում է Էքսպերտային՝ տրամաբանական ճշգրտում:

Դրա հետ մեկտեղ ՀՀ ՄԳԻ-ի հաշվարկման համար

կիրառվում են որակի ճշգրտման այլ մեթոդներ՝

- ուղղակի կամ պարզ համադրման,
- ապրանքների տեսականու ժամանակային համընկման,
- ընդհանուրի միջինի բաշխման կամ կամրջային համընկման,
- հոմոգեն մոդելի (ապրանքի ներկայացուցչի) փոփոխության տեղադրման,
- տարբերակի արժեքի (չափի միավորների) ճշգրտման:

ՀՀ ՄԳԻ-ի հաշվարկներում կիրառվող որակի ճշգրտման մեթոդներն ըստ առանձին ապրանքախմբերի՝

- պարենային ապրանքներ՝ ուղղակի համադրման, տարբերակի արժեքի և կամրջային համընկման,
- հագուստեղեն և կոշիկեղեն՝ ուղղակի համադրման, կամրջային համընկման,
- ավտոմեքենաներ՝ ուղղակի համադրման, էքսպերտային գնահատման, կամրջային համընկման,
- հեռուստացույցներ, լվացքի մեքենաներ, սեղանի համակարգիչներ, նոութբուկներ, կահույք, տնային էլեկտրոնային սարքավորանք՝ ուղղակի համադրման, համընկման և կամրջային համընկման:

Նոր արտադրանքի ներկայացումը. Նոր ապրանքները չեն ընդգրկվում ՄԳԻ-ի սպառողական զամբյուղում մինչև հաջորդ կշիռների արդիականացումը: Ընդմիջտ բացակայող համարվում է այն ապրանքը, որը համեմատաբար երկար ժամանակ (2-3 ամսից ավել) բացակայել է սպառողական շուկայից, չի ունեցել սպառում, հետևաբար ապագայում չի նախատեսվում դրա արտադրությունը նախկին որակական հատկանիշներով:

Սպառողական ապրանքների դիտարկման գործող ցանկում հնարավոր է և անհրաժեշտ իրականացնել ընդմիջտ բացակայող ապրանքատեսակի փոփոխություն, քննարկելով փոփոխման անհրաժեշտության հարցը բազային առևտրի

կետերի ապրանքագետ մասնագետների հետ: Քանի որ այդ ապրանքները (ընդմիջտ բացակայող) մշտապես անհասանելի են օգտագործողների համար և դրանց գների դիտարկումն անհնարին է, դրանք փոխարինվում են նոր, նմանատիպ ապրանքներով, որոնց ընդհանրացված տեխնիկական բնութագրերը հիմնականում համապատասխանում են նախկինում դիտարկվող ապրանքի բնութագրին: Դրա հետ մեկ տեղ վերը նշված ապրանքատեսակները կարող են նաև փոխարինվել մեկ ուրիշ ապրանքատեսակով, եթե դրանք կորցրել են իրենց արդիականությունը կամ բնակչության սպառման կառուցվածքում էական ծավալ չեն կազմում:

Գների դիտարկման համար ընտրված ապրանքատեսակի ներգրավվածությունը ՄԳԻ-ի կազմում կարող է վերանայվել և դա փոխարինվել այլ ապրանքատեսակով արդիականացումը կորցնելու պարագայում, երբ նշված ապրանքատեսակի սպառման ծավալը (տեսակարար կշիռը) ընդհանուր սպառման ծավալներում անընդմեջ կրճատվում է:

Սեզոնային ապրանքներ. Սպառողական շուկայում սեզոնային ապրանքների բացակայության ամիսների պայմաններում, դրանց գների և գների ինդեքսների գնահատման մեթոդը համապատասխանում է ժամանակավոր բացակայող ապրանքների գնահատման մեթոդաբանությանը: Ապրանքների, գնային տվյալների և հետևաբար գների ինդեքսների բացակայությամբ պայմանավորված, դրանց համար պայմանականորեն կիրառվում են համապատասխան ենթախմբի ինդեքսները, որոնք հաշվարկվում են տվյալ ենթախմբի շուկայում առկա ապրանքների ամսական միջին կշռված գնային ինդեքսներով: Սեզոնային ապրանքի ի հայտ գալու ամսին, երբ արձանագրվում է դրա իրական գինը, դրան նախորդող ամսվա համար հաշվարկվում է պայմանական գին՝ արձանագրված վերջին գինը վերահաշվարկելով տվյալ ապրանքի բացակա ամիսներին ձևավորված համապատասխան խմբի կամ ենթախմբի ինդեքսների միջոցով:

		Միջանկյալ տվյալների և վիճակագրական արտադրանքի գնահատում և վավերացում. ՄԳԻ-ի համար ստացված տեղեկատվության ստանդարտ սխալների կամ շեղումների գործակիցները գնահատելու նպատակով կանոնավոր հիմունքներով կատարվում են վերլուծություններ և հաշվարկներ: Գնային տվյալները, որոնք ստացվում են գնադիտարկողների կողմից, ենթարկվում են համակարգչային թվաբանական և տրամաբանական ստուգումների:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	ՄԳԻ-ի ընտրանքի սխալների համար չկան որևէ թվային գնահատումներ, քանի որ դրանք դժվար է քանակապես որոշել՝ ելնելով գնային ինդեքսի բարդ կառուցվածքից և կիրառվող ոչ հավանական ընտրանքի մեթոդից:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Ագրեգացված պատմական ժամանակագրական տվյալները առկա են 1993 թվականից: Նոր կշիռներով հաշվարկված ինդեքսը փոխկապակցված է պատմական շարքերին: Համադրվող ապրանքների և ծառայությունների զամբյուղը նույնը չէ և զամբյուղի արդիականացման հետ մեկտեղ պարբերաբար ենթարկվում է քանակական և որակական փոփոխությունների (1993թ-ին ՄԳԻ-ի զամբյուղը ներառում էր 330, 2006-ից մինչև 2016 թվականը ներառյալ՝ 470, 2018թ. հունվարից՝ 450 ապրանք-ծառայություններ):
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվում է միայն մեկ սպառողական գների ինդեքս, ուստի այն համադրելի չէ այլ գնային ինդեքսների հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակվում են միայն վերջնական տվյալները: ՄԳԻ-ն վերահաշվարկվում է սկսած հունվար ամսից, միայն կշիռների վերանայմանայն՝ փոփոխության ժամանակ:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Տարեկան հրապարակումներ <ul style="list-style-type: none"> • «Հայաստանի վիճակագրական տարեգիրքը» հասանելի է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

		<ul style="list-style-type: none"> • «Հայաստանի մարզերը և Երևանը թվերով» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն, անգլերեն լեզուներով: • «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն, անգլերեն լեզուներով: • «Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածու հասանելի է հայերեն, անգլերեն լեզուներով: <p>Նորությունների հրապարակումներ</p> <ul style="list-style-type: none"> • Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ներկա տվյալները, որոնք բնութագրում են Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը, հասանելի է հայերեն լեզվով: • Մամուլի հաղորդագրություն՝ «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում», յուրաքանչյուր ամիս, հասանելի է հայերեն լեզվով: <p>Ամսական ժողովածու</p> <ul style="list-style-type: none"> • «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական տեղեկատվական գեկույցը հասանելի է հայերեն, ռուսերեն լեզուներով: • «ՀՀ Սպառողական գների ինդեքսը» վիճակագրական ամսական տեղեկագիրը հասանելի է հայերեն, անգլերեն լեզուներով: <p>Եռամսյակային ժողովածու</p> <p>«Աղքատություն և պարենային անվտանգություն» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն և անգլերեն լեզուներով:</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), անգլերեն և ռուսերեն լեզուներով հետևյալ կայքերում՝ http://www.armstat.am/en/?nid=82, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6:</p>
5.2	Հիմնական նյութերը.	Գների մասին տեղեկատվությունը հիմնականում

	Պահպանումն ու կիրառելիությունը	ներկայացվում է աղյուսակների միջոցով և պահպանվում է էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորումը	ՄԳԻ-ի հիմնադրույթների, շրջանակի, դասակարգման, տվյալների աղբյուրների և մեթոդաբանության փաստաթղթերը հասանելի են ԱՄՀ-ի պաշտոնական կայքի «Տեղեկատվության տարածման չափորոշիչների թվատախտակի» կայքում՝ http://dsbb.imf.org/Pages/SDDS/CtyCtgList.aspx?ctycode=ARM Ի լրումն, Արմստատի վիճակագրական տարեգրքում և մյուս հրապարակումներում կան ՄԳԻ-ի մեթոդաբանական նշումներ, որոնք նաև հասանելի են Արմստատի պաշտոնական կայքում՝ http://www.armstat.am/am/?nid=80 :
5.4	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373 :
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: